# ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՄՊԵՐԸ ՉԵՆ ԴԱՆԴԱՂԻ՝ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ ԲԱՔՎՈՒՄ



Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը կշարունակի այն աշխատանքը, որ կանխավ կատարել է Հեյդար Ալիեւը ղարաբաղյան կարգավորման ուղղությամբ: Այս մասին հայտարարել է Ադրբեջանի նախագահի գործադիր աշխատակազմի արտաքին կապերի բաժնի վարիչ Նովրուզ Մամեդովը, հաղորդում է «Ինտերֆաքսը»: «Ղարաբաղյան բանակցային գործընթացում նոր անձի՝ Ադրբեջանի նորընտիր նախագահի, հայտնվելը չի հանգեցնի հակամարտության կարգավորման տեմպերի դանդաղման»,- ասել է նա: «Նոր անձի գալով բանակցային գործընթացի դանդաղման մասին կարելի է խոսել, երբ խոսքը ԵԱՀԿ Մինսկի խմբի նոր համանախագահի մասին է, որին իրոք ժամանակ է պետք, որպեսզի ծանոթանա գործին: Իսկ Իլհամ Ալիեւը բավական վաղուց եւ հաջող զբաղվում է այդ խնդրով»,- պարզաբանել է նա: